ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 6/6

3 մայիսի 2018 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը *որոշում է*.

1. «Երևանի պետական համալսարանի ներքին կարգապահական կանոնների» (ընդունված ԵՊՀ գիտական խորհրդի 2015թ. մարտի 26-ի նիստում) 35.-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«35. ԵՊՀ գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական համակազմի (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), գիտական աշխատողներ) աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 32 ժամ ընդհանուր տևողությամբ:

ԵՊՀ-ի մյուս աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ 40 ժամ ընդհանուր տևողությամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ